ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ № 186/86-Ռ «29» 09 2023 թ.

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄՈՒՄ
ՄԻՋՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԹԵԶԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԿՐԹԱԹՈՇԱԿԻ
ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 57-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջներով՝

հրամայում եմ՝

1. ԵՊՀ-ում կազմակերպել միջմասնագիտական թեզի կատարման համար կրթաթոշակի տրամադրման մրցույթ:
2. Հաստատել մրցույթի անցկացման կարգը՝ համաձայն Հավելված 1-ի:
3. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը հանձնարարել ակադեմիական/ուսումնական հարցերի գծով պրոռեկտորին:
4. Սույն հրամանի մասին տեղեկացնել ԵՊՀ աշխատողներին և սովորողներին:

ՌԵԿՏՈՐ Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1
Կցված ԵՊՀ ռեկտորի 29.09.23թ. 186/Ա հրամանին

ԿԱՐԳ
«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄՈՒՄ ՄԻՋՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԹԵԶԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամում (այսուհետ՝ ԵՊՀ) միջմասնագիտական հետազոտական թեզերի կատարումը խրախուսելու համար ԵՊՀ մագիստրատուրայի ուսանողներին հետազոտական կրթաթոշակներ (այսուհետ՝ կրթաթոշակ) տրամադրելու կարգը:

2. Հայտատուն կրթաթոշակ ստանալու համար յուրաքանչյուր տարվա փետրվարի 10-ից մինչև 20-ն ընկած ժամանակահատվածում e-request.ysu.am համակարգի միջոցով միջմասնագիտական թեզ գրելու վերաբերյալ հայտ է ներկայացնում ԵՊՀ ռեկտորին՝ կցելով մրցութային փաթեթը: Նշված ժամկետի ավարտից հետո ներկայացված հայտերը ենթակա չեն քննարկման:

3. Մրցութային փաթեթը պետք է ներառի հետևյալ փաստաթղթերը՝

1) հայտ՝ «pdf» կամ «jpg» ձևաչափով (ստորագրված)՝ ձևաչափը կցվում է,

2) նախագիծ՝ «pdf» կամ «jpg» ձևաչափով (ստորագրված)՝ ձևաչափը կցվում է,

3) միջմասնագիտական թեզի անվանման մասին հրաման,

4) ուսումնական ստորաբաժանման ղեկավարի զեկուցագիր՝ միջմասնագիտական մագիստրոսական թեզ գրելու վերաբերյալ՝ բոլոր կատարողների և նրանց գիտական ղեկավարների մասին տեղեկատվությամբ,

5) աջակցության նամակ տրված երկու ուսանողների գիտական ղեկավարների կողմից,

6) ուսումնական ստորաբաժանման գիտական խորհրդի որոշման քաղվածք:

4. Կրթաթոշակի ստացման համար կարող են դիմել ԵՊՀ մագիստրատուրայի նույն տևողությամբ տարբեր կրթական ծրագրերում սովորող, 16 և բարձր միջին որակական գնահատականի (ՄՈԳ) շեմը հաղթահարած ուսանողները, ովքեր համապատասխան ուսումնական ստորաբաժանումից ներկայացված զեկուցագրի համաձայն ներառվել են միջմասնագիտական թեզի կատարման ծրագրում և ունեն հաստատված հետազոտական թեմա:

5. Կրթաթոշակի փաթեթի փորձաքննությունն իրականացնում է ԵՊՀ մեթոդական խորհուրդը: Այդ նպատակով խորհուրդը հրավիրում է փորձագետների, հաստատում է փորձաքննության արդյունքները, անհրաժեշտության դեպքում

կազմակերպում կրկնակի փորձաքննություն ու ռեկտորի հաստատմանն է ներկայացնում ֆինանսավորման երաշխավորված հետազոտական թեզերի ցանկը:

6. Հայտերի փորձաքննությունն ու գնահատումը կատարվում է ըստ հետևյալ չափանիշների՝

1) աշխատանքի արդիականություն,

2) նորարարական հետազոտական մոտեցումներ,

3) ԵՊՀ առաքելությանը և/կամ ռազմավարական ծրագրի նպատակներին համապատասխանություն,

4) ուսումնական ստորաբաժանման հետազոտական առաջնահերթություններին համապատասխանություն:

7. Կրթաթոշակի առավելագույն չափը 1 000 000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ է, որը տրվում է ծրագրում ներառված ուսանողներին մագիստրոսական թեզի իրականացման ընթացքում՝ հավասար չափաբաժիններով՝ ըստ ուսումնական կիսամյակների:

8. Թեզի պաշտպանությունից հետո կրթաթոշակի մասնակիցները պետք է ԵՊՀ մագիստրատուրայի բաժին ներկայացնեն ամփոփիչ հաշվետվություն, որի հիման վրա մեթոդական խորհուրդը տալիս է եզրակացություն՝ ծրագրի իրականացման վերջնարդյունքների մասին:

ՀԱՅՏ

ՄԻՋՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Մագիստրոսական թեզի անվանումը,
2. կրթական ծրագրի անվանումը, ուսումնական ստորաբաժանումը,
3. հայտատուների տվյալները (անուն, հայրանուն, ազգանուն, հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի հասցե),
4. գիտական ղեկավարների տվյալները (անուն, հայրանուն, ազգանուն, հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի հասցե),
5. ԵՊՀ-ից հայցվող ֆինանսավորման չափը (թվերով ու բառերով),
6. ստորաբաժանման ղեկավարի ստորագրությունը:

Հայտատու՝ _____ _____

(ստորագրություն) *(Ա.Ա.Հ.)*

«____» _____ 202_ թ.

ՆԱԽԱԳԻԾ

Ներկայացնել հայերեն մինչև 10 էջ՝ ներառյալ գրաֆիկները, գծագրերը, լուսանկարները և գրականության ցանկը.

1. *համառոտ բնութագիրը (անոտացիա)*

2. *խնդրի դրվածքը, արդի վիճակը*

3. *նախագծի նպատակները և խնդիրները*

4. *հետազոտական ծրագիրը*

5. *իրականացման եղանակները*

6. *օրացուցային պլանը (ըստ կիսամյակների)*

7. *տվյալ ուղղությամբ ունեցած ձեռքբերումները*

8. *ակնկալվող արդյունքների քանակական և որակական ցուցանիշները* (գիտական հոդվածներ, գիտաժողովների նյութեր և այլն), մտավոր սեփականության տնօրինում (արտոնագիր, հեղինակային իրավունք և այլն), միջազգային համագործակցային կապերի ամրապնդում, համագործակցության հեռանկարներ)

9. *օգտագործված գրականության ցանկը*

Հայտատու՝ _____ _____

(ստորագրություն) *(Ա.Ա.Հ.)*

ՀԱՎԵԼՎԱԾ 2
Կցված ԵՊՀ ռեկտորի 29.09.23թ. թիվ 186/86 հրամանին

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ
«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄՈՒՄ ՄԻՋՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Միջմասնագիտական մագիստրոսական թեզը հարակից մասնագիտական ոլորտի, միևնույն ուսումնական տնողություն ունեցող կրթական ծրագրերում սովորող երկու ուսանողների կողմից երկու գիտական ղեկավարների ընդհանուր ղեկավարությամբ իրականացվող հետազոտական աշխատանք է:

1.2 Միջմասնագիտական մագիստրոսական թեզը հետազոտական և կիրառական նշանակություն ունեցող աշխատանք է, որն արտացոլում է հարակից մասնագիտական ոլորտներում ուսանողների ձեռք բերած գիտելիքները և կարողությունները կիրառելու և միջմասնագիտական ինքնուրույն հետազոտություն կատարելու հմտությունները:

2. ԹԵԶԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

2.1 Միջմասնագիտական մագիստրոսական թեզերի պատրաստումն ու պաշտպանությունն իրականացվում է համաձայն «Երևանի պետական համալսարանում մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման» կարգի, ինչպես նաև սույն ընթացակարգի 2.2, 2.3, 2.4., 2.5 կետերի:

2.2 Միջմասնագիտական մագիստրոսական թեզի թեման հաստատվում է տվյալ ծրագրերն իրականացնող ուսումնական ստորաբաժանումների գիտական խորհուրդներում և ներկայացվում է Ուսումնամեթոդական վարչություն՝ հրամանագրման:

2.3 Միջմասնագիտական մագիստրոսական թեզը նախքան նախապաշտպանությունը անցնում է փորձաքննություն միջամբիոնային հանձնաժողովում, որի հիման վրա հանձնաժողովը տրամադրում է եզրակացություն:

2.4 Միջմասնագիտական մագիստրոսական թեզի նախապաշտպանությունը և

հրապարակային պաշտպանությունն իրականացվում է երկու տարբեր ուսումնական ստորաբաժանումների մասնագիտական հանձնաժողովների նիստերում: Նախապաշտպանության ժամանակ յուրաքանչյուր հանձաժողովին ներկայացվում է միջամբիոնային հանձնախմբի եզրակացությունը և երկու գիտական ղեկավարների կարծիքները:

2.5 Միջմասնագիտական մագիստրոսական թեզը ենթակա է արտաքին գրախոսման: Նախապաշտպանությունից հետո ուսումնական ստորաբաժանումները միջմասնագիտական թեզը ներկայացնում են արտաքին գրախոսման՝ կցելով միջամբիոնային հանձնաժողովի եզրակացությունը, նախապաշտպանություններից հետո համապատասխան հանձնաժողովների կողմից տրված ուղեկցող նամակը՝ թեզի միջմասնագիտական կարգավիճակ ունենալու մասին, և երկու գիտական ղեկավարների կարծիքները: